ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 191- Ա

23 հոկտեմբերի 2015 թ.

ՀԱՅԿ ՂԱՓԱՆՑՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ և 164-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով՝

Կարգադրում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Ղափանցյանին 2015 թվականի նոյեմբերի 2-ից՝ 20 աշխատանքային օր տևողությամբ, տրամադրել 2015 թվականի հերթական արձակուրդը:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը, մինչև սույն թվականի նոյեմբերի 27-ը ներառյալ, վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության բեմական մասի վարիչ Նինա Չարվադարյանին:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ